ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«25» «դեկտեմբերի» 2025 թվական № 504-Ա

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԱՅԱՆՏԱՌ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ «ՍՅՈՒՆԻՔԻ ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ՎԱՆԱՁՈՐԻ ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԱՆՏԱՌՆԵՐՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՏԱՏԵՂԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքի 36-րդ հոդվածով, Կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 17-ի N 1072-Ն որոշման հավելվածի 8-րդ և 9-րդ, 2006 թվականի հունիսի 22-ի N 897-Ն որոշման հավելվածի 37-րդ կետերով և հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրենի 2025 թվականի դեկտեմբերի 3-ի N Ն/31.4.6/16929 զեկուցագրով ներկայացված նյութերը (լրացված հատատեղերի հաշվեգնահատման ցուցակները և հատատեղերի անձնագրերը, քարտեզ-սխեմաները), ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարի 2025 թվականի դեկտեմբերի 12-ի N 479-Ա հրամանով ստեղծված մասնագիտական հանձնախմբի կողմից 2025 թվականի դեկտեմբերի 22-ի N Ն/13.5/17841 զեկուցագրով ներկայացված արձանագրությունը (հետազոտման ակտ).

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել շրջակա միջավայրի նախարարության «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Սյունիքի անտառտնտեսություն» և «Վանաձորի անտառտնտեսություն» մասնաճյուղերի անտառներում 2025 թվականին լրացուցիչ հատատեղերը՝ համաձայն հավելվածի:

2. Շրջակա միջավայրի նախարարության «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ սահմանված կարգով ապահովել «Սյունիքի անտառտնտեսություն» և «Վանաձորի անտառտնտեսություն» մասնաճյուղերում

հատատեղերի հատկացման, բնափայտի մթերման և իրացման աշխատանքների իրականացումը:

3. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Ա. Մեյմարյանին:

Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

12/25/2025

X

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Երևան

Հավելված
շրջակա միջավայրի նախարարի
2025թ. դեկտեմբերի «25» -ի N 504-Լ հրամանի

«ՀԱՅԱՆՏԱՌ» ՊՈԱԿ-Ի «ՍՅՈՒՆԻՔԻ ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ՎԱՆԱՁՈՐԻ ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՏԱՏԵՂԵՐ

№	«Անտառտնտեսություն» մասնաճյուղ	Հատման տեսակը, խնամքի (նոսրացման)	
		ծավալը, խմ	շինափայտ, խմ
1	Վանաձորի	130.59	0
2	Սյունիքի	61.94	0
ԸՆԴԱՄԵՆԸ		**192.53**	**0**